

Մտածումներ հաղորդակցային ակտի շուրջ

Նինա Ջաղինյան

Հանգուցային բառեր. հաղորդակցություն, հաղորդագրություն, խոսքային և ոչ խոսքային խորհրդանշաններ, երկխոսություն, հաղորդակցային սկզբունքներ, ծածկագրում և վերծանում, հետադարձ կապ

Նախաբան

Այս հետազոտությունը վերաբերում է հաղորդակցության գործընթացի և կառուցվածքի խնդրի ուսումնասիրմանը՝ սահմանելով հաղորդակցային ակտը և տարբերակելով այն պարունակող տարրերը, ինչպես նաև հաղորդակցային ակտի ավարտունության խնդիրը: Այստեղ նպատակ ենք ունեցել վեր հանելու այն փաստը, որ հաղորդակցային ակտի ավարտունությունը հիմնավորապես պայմանավորված է հաղորդակցության գործընթացում արտալեզվական գործոնի ազդեցությամբ:

Հաղորդակցային ակտերի համալիր քննության համար ընդհանուր առմամբ անհրաժեշտ է կենտրոնանալ հաղորդակցային ձևի և գործառնության վրա: Այս երկու հատկանիշները ներհատուկ են ամեն մի հաղորդակցային ակտի և կարող են դառնալ վերլուծության լավագույն միջոցներ: Որպեսզի հաղորդակցային ակտը բնականոն ընթանա և ավարտուն դառնա, ուղարկված հաղորդագրությունը պետք է անպայման ծածկագրվի: Ինքնին հասկանալի է, որ շատ հաղորդակցային համակարգերում տեղեկատվության աղբյուրը մարդն է: Հենվելով իր անցած փորձի և առկա կարիքների ու ըմբռնումների վրա՝ այդ աղբյուրը մյուսներին փոխանցելու իրազեկություն ունի: Արդյունավետ հաղորդակցության համար պետք է կարողանալ հետադարձ կապի խնդիրը մեկնաբանել: Մարդկային լեզվական հաղորդակցության հիմնական նպատակը ֆիզիկական հաղորդագրեր ուղարկելը կամ դրանց վերացական մտավոր պատկերացումներ տալը չէ, թեև, ինչ խոսք, այդպիսի պատկերացումները կարող են «լեզվական արտահայտություն» իմաստի մեջ դերակատարություն ունենալ: Այս ուսումնասիրության մեջ դիտարկել ենք լեզվի և մտածողության հարաբերակցության հարցը, որքանով որ այն առնչություն ունի լեզվական հաղորդակցության, խոսողի լեզվական ունակությունների՝ սերտ կապակցված խոսքի արտաբերման և ըմբռնման հետ, ինչպես նաև հաղորդակցությունը՝ ընդհանուր առմամբ: Այստեղ կարևոր

ենք համարել նաև ներկայացնել մի շարք նշանավոր տեսաբանների մոտեցումները, մասնավորապես՝ հանրալեզվաբան Փ. Գրայսի առաջադրած հաղորդակցային-համագործակցային սկզբունքները (մաքսիմները) խնդրո առարկան քննության ենթարկելիս:

Հաղորդակցության երևույթը, գործընթացը, կառուցվածքը մշտապես եղել են բազմաթիվ լեզվաբանների, հոգեբանների և հոգելեզվաբանների սևեռուն ուշադրության կենտրոնում: Այս հետազոտության նորույթն այն է, որ նրանում փորձ է արված դիտարկել հաղորդակցային ակտերի ավարտունության խնդիրը այնքանով, որքանով արտալեզվական գործոնների ազդեցությանն է առնչվում: Ուրվագծելով հիմնական արտալեզվական գործոնները և շեշտելով հոգեբանականը՝ այստեղ մասնավորապես փորձ է արվել նաև պարզաբանելու հաղորդակցային ակտերի անավարտունությունը՝ նպատակ ունենալով հասնելու որոշակի էական արդյունքի:

Խոսքային հաղորդակցություն

Հաղորդակցությունն նշանակում է, որ տեղեկատվությունը մի տեղից անցնում է մյուսին: Երբ հաղորդակցությունը տեղի է ունենում, տեղեկատվության փոխանցման մեջ առկա բաղադրիչ մասերը կամ տարրերը ընդգրկում են հաղորդակցային համակարգը:

Գոյություն ունեն հաղորդակցության շատ ձևեր, այսինքն՝ հաղորդագրություն ուղարկելու շատ միջոցներ: Երկու ամենաշատ հանդիպող ձևերն են խոսքային հաղորդակցությունը (բառեր) և ոչ խոսքային հաղորդակցությունը (գործողություններ): Հաղորդակցության այս ձևերը ներանձնային են, երբ մարդը հաղորդակցվում է ինքն իր հետ, իսկ հրապարակավ կամ զանգվածային հաղորդակցություն է, երբ մարդիկ առնչվում են փոքր խմբերով կամ մեծ լսարանի հետ: Հաղորդակցության այս ձևերի համար հաղորդագրություն ուղարկելու և ստանալու գործընթացը միանման է, սակայն հաղորդակցային գործառնությունները կտարբերվեն՝ ըստ որոշակի իրադրության: Հաղորդակցության գործառնությունների մի շարք ընդհանուր կարգեր ներառում են փոխանցող տեղեկատվություն, համոզմունք (վերաբերմունքի փոփոխություն) և ազատ հանգիստ: Այսպիսով՝ ինչպես սահմանել է Ռ. Վերդերբերը իր «Արդյունավետ հաղորդակցության խոսք» աշխատության մեջ. «Հաղորդակցությունը խորհրդանշանների օգտագործմամբ տեղեկատվություն փոխանակելու գործընթաց է հաղորդագրություն ուղարկելու կամ ստանալու համար» [8]: Չնայած միանգամայն հնարավոր է ինքնիրեն հաղորդակցվել, սակայն մարդ ներգրավվում է նաև միջանձնային հաղորդակ-

ցույթանք, որն է՝ հաղորդակցություն երկու կամ ավելի մարդկանց միջև: Հաղորդակցությունը երկուսի միջև ներառում է հաղորդագրության ուղարկում և ստացում: Հաղորդագրություն ուղարկող անձը կոչվում է «ուղարկող», իսկ նա, ով ստանում է այդ հաղորդագրությունը՝ «ստացող»:

Ընդհանրապես հաղորդակցային ակտը պայմանավորված է իրադրության խթանման գործառույթով և պատասխանով: Խթանող իրադրության և տրվող պատասխանի միջև միջանկյալ օղակ են ընդունիչ բջիջները և զգայական նյարդերը: Ինչ վերաբերում է ուղեղին, զգայական նյարդերի գործունեությունը հավասարազոր է դրան, կամ ներկայանում, խթանում է այն: Այդ նկարագրությունը համապատասխանում է ամենախիստ վարքագծային հարմարեցումներին: Միշտ հաղորդակցություն է տեղի ունենում, երբ որևէ տեղ տեղեկատվություն կամ մարդ կա, և մենք ուզում ենք այն հասցնել մեկ այլ տեղ կամ մարդու:

Տեղեկատվության ծածկագրում և վերծանում

Իրազեկություն ստանալու առաջին քայլը տեղեկատվության ծածկագրումն է մի շարք խորհրդանշաններով: «Ծածկագրման» սահմանումը բավականին լայն է: Սովորաբար ծածկագրումները ընկալվում են գաղտնիքների և բանասարկությունների շրջանակներում, սակայն դրանց մասին կարելի է խոսել շատ ավելի ընդհանուր գծով: Խորհրդանշանների կամայական համակարգ, որը առաջնահերթ համաձայնություն է սկզբնաղբյուրի և վերջնապատակի միջև և գործադրվում է ներկայացնելու և հաղորդելու տեղեկատվություն, կարելի է կոչել ծածկագրում: Վերջինս բաղկացած է խոսակցական հնչյուններից, գրավոր նշաններից, նշանացի հրահանգներից, ասենք՝ դրոշակակրի ձեռքի շարժումը, հեռագրիչի թխթխկոցը, խուլ ու համրերի ժեստերը կամ նմանատիպ հարմար խորհրդանշանների շարքը: Ծածկագրված հաղորդագրությունը շարժվում է միջանկյալ մի տարածքում և վերծանվում է ընդունող անձի կողմից:

Հաղորդակցության վերլուծությունը սկիզբ է առնում ամբողջ մարդկային ձայնեղության կարևորագույն ծածկագրային գործընթացից: Գոյություն ունեն նաև տեղեկատվության ծածկագրման այլ ձևեր, սակայն դրանց շարքում խոսքը առաջին յուրացված և լայնորեն տարածված ձևն է: Խոսքը շատ առումներով հենց հիմնական ծածկագրող գործընթաց է:


Ինչպես սահմանված է «Հոգեվեզվաբանություն. տեսության և հետազոտական խնդիրների ուսումնասիրություն» աշխատության մեջ, ընդհանուր առմամբ այնպիսի հաղորդակցություն ունենք, «երբ մի համակարգ,

աղբյուր ներգործում է մեկ այլ համակարգի, նպատակատեղի (destination) վրա՝ երկրնստրական ազդանշանների շարժմամբ, որ կարող է հաղորդվել դրանք կապող տեղեկատվական միջոցով» [7]:

Տեղեկատվության աղբյուրը հասկացվում է որպես մեկ կամ ավելի հաղորդագրություններ տվող միջոց, որը պետք է հաղորդիչով վերածվի ազդանշանների, և այդ ազդանշանները ընդունողի միջոցով պետք է նորից վերածվեն հաղորդագրության, որն էլ կարող է ընդունվել որպես նպատակատեղ (վերջնանպատակ):

Վերը հիշատակված «Հոգելեզվաբանություն. տեսության և հետազոտական խնդիրների ուսումնասիրություն» աշխատության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում Կ. Շենոնի և Ու. Ուիվլերի առաջ քաշած հաղորդակցության մաթեմատիկական տեսության վրա: Նրանք առաջարկում էին մի ձևական կաղապար, որը երբեմն վկայակոչվում է որպես հաղորդակցության հաղորդագրային կաղապար:

Սակայն Կ. Շենոնը և Ու. Ուիվլերը առնչվում էին տեղեկատվության



էլեկտրոնային փոխանցման կաղապարման հետ, որն է հեռախոսային, հեռագրական և հեռուստատեսային հաղորդակցությունը: Նրանց մտահղացումները շատ մեծ ազդեցություն են ունեցել տեխնոլոգիաների զարգացման գործում: Սակայն նրանց առաջ քաշած հաղորդակցության կաղապարը խիստ ընդհանրական է և կարող է վերաբերել նաև լեզվական ուսումնասիրություններին: Մարդկային լեզվական հաղորդակցությունը տարբերվում է առնվազն երկու առումով՝ էլեկտրոնային տեղեկատվության փոխանցման դեպքերից, որոնք և առաջացրել են հաղորդագրային կաղապարը:


Դրանք են՝

- ա) հաղորդակցության նպատակները և հաղորդագրերի (ազդանշանների) բնույթը,

բ) հաղորդակցության տեղեկատվության և հաղորդագրության ծածկագրման մեջ եղած տեղեկատվության միջև եղած համապատասխանությունը:

Երբ մարդիկ ուղարկում են լեզվական ազդանշաններ, նրանք իրենց ներսում որոշակի մտադրություն են ունենում այդ ազդանշանները ուղարկելիս. ուզում են տեղեկացնել, խոստանալ, հարցնել, վիճել, նկարագրել, սպառնալ, խնդրել, շնորհակալություն հայտնել, հավաքվել, հարցը լուծել, օրհնել, համոզել, հավաստիացնել, ներշնչել, մեկին հասկացնել և այլն:

Մյուս կողմից՝ Ռ.Վերդերբերը ներկայացնում է լեզվական հաղորդակցության գործընթացը հետևյալ սխեմայի տեսքով [8]:



Կարևոր է նշել, որ հաղորդագրություն ուղարկողը և այն ստացողը փոխանակում են դերերը՝ կախված այն բանից՝ հաղորդագրությունը փոխանցվո՞ւմ է, թե՞ հետադարձ կապ է ստեղծվում:

Հաղորդակցությունը միակողմանի անցում չէ, հակառակը՝ տեղեկատվության կիսում է կամ փոխանակում:

Հաղորդագրություններ և հետադարձ կապ

Մարդիկ հաղորդակցվում են՝ հաղորդագրություններ ստանալով և ուղարկելով: Հաղորդագրությունները կազմված են մտքերից և զգացումներից: Կամայական հաղորդակցության ժամանակ խոսողները հազվադեպ են միայն մեկ տեղեկատվական աղբյուրից հաղորդագրեր ուղարկում: Երբ մարդիկ խոսում են, ձայնից առաջացած հնչյունական ալիքները հենց առաջնային հաղորդագիր են: Հաղորդագիր են նաև մարդու դեմքի արտահայտությունը, ժեստերը: Անզամ առաջնային հաղորդագրությունը իրազեկություն է տալիս տարբեր մակարդակներում: Այն շատ ավելի բառեր է ընդգրկում, քան՝ մյուսները: Այն ներկայացնում է բառերը հնչերանգի և ժամանակի ընտրության տրված նմուշի մեջ, որոնք էլ նպաստում են ասելիքի ամբողջական իմաստին:

Հաղորդագրությունները ստեղծվում են դրանք ուղարկողների և ստացողների միջև խոսքային կամ ոչ խոսքային խորհրդանշանների օգնությամբ: Բառային նշանները, որոնք դառնում են լեզվաբանական համակարգեր, սովորաբար կոչվում են բառային խորհրդանշաններ: Դրանք բառեր են, և սովորաբար հաղորդակցության քննարկումը սկսվում է այն բանից, որ բառերը մատնանշվում են որպես նշաններ, որոնք և պայմանականորեն փոխարինում են իրենց ներկայացրած առարկաներին կամ մտքերին: Միսալ կլինի, համենայն դեպս, ենթադրել, որ բառերի այս ներկայացուցչական բնույթը խիստ տարբերվում է մյուս բոլոր ազդակներից, որոնց պատասխանում ենք մենք: Խոսքային ազդակների տարբերակող նշանն այն է, թերևս, որ բառերն ունեն ինքնաբավ կարևորություն [6]:

Տեղեկատվական աղբյուրները հաղորդագրեր ուղարկելու միջոցներ են: Մարդիկ մյուսների հետ առնչվելիս խոսքային հաղորդագրություններ են ուղարկում ձայնային ալիքներով: Միևնույն ժամանակ նրանք նաև ոչ խոսքային հաղորդագրեր են ուղարկում օդով՝ ձայնային և լուսային ալիքներով:

Արդյունավետ հաղորդակցվելու համար խոսողը ինքը պետք է որոշի ինչպես ուղարկի յուրաքանչյուր հաղորդագրություն: Եվ դա նա անում է հիմնականում ծածկագրման միջոցով, որը մտքերի և զգացողությունների վերափոխումն է բառային և ոչ բառային խորհրդանիշների: Խոսակցության մեջ ծածկագրման գործընթացը գրեթե վայրկենական ընթացք ունի: Բերենք Ռ. Վերդերբերից մի օրինակ ծածկագրման գործընթացի առնչությամբ: Այսպես՝ պատկերացրեք՝ նախաճաշում եք և որոշում եք աղ ցանել սենդվիչի վրա, բայց աղամանը սեղանի մյուս ծայրին է: Թերևս կնայեք այդ ծայրին նստած մարդուն և կասեք. «Դե, աղին չեմ հասնում: Ի՞նչ

ասեմ, ո՞ր մեկը աղը ավելի մոտ կբերի» [8]: Դրա փոխարեն դուք մեքենայորեն ձեր կարիքները ծածկագրում եք բառերի:

Եթե ծածկագրման գործընթացը գրեթե վայրկենական է խոսակցական իրադրության մեջ, ապա հրապարակային ելույթներում այն միանգամայն տարբեր է: Հրապարակային խոսքը կարիք ունի, որ որևէ մեկը պլանավորի, թե ինչպես հաղորդի որոշակի մի միտք: Ելույթի համար խոսնակը կարող է փորձել երկու կամ երեք տարբեր ձևեր՝ հավաստելու նույն միտքը, մինչև համոզվի, որ լավագույն տարբերակն է պատրաստել հանդիսականի համար:

Ծածկագրումը միայն բառային հաղորդակցության խնդիր չէ, որ ունի: Միտքը բառերով արտահայտելու ընթացքում մարդը հավանաբար ուղարկում է ոչ բառային հաղորդագրեր, որոնք ազդում են ստացողի պատասխանի վրա: Ոչ բառային հաղորդակցությունը ներառում է ձայնի տոնը, դեմքի արտահայտությունը, ժեստերը, շարժումները: Հաղորդակցության մեջ բազմաթիվ շփոթություններ արդյունք են բառային և դրանց ուղեկից ոչ բառային հաղորդագրությունների միջև եղած հակասություններին:

Հաղորդակցությունը չի ավարտվում սոսկ հաղորդագրություն ուղարկելով: Որպեսզի հաղորդակցությունն ավարտուն դառնա, ընդունողը պետք է վերձանի այն: Վերձանումը նշանակում է գտնել բառային և ոչ բառային ազդանշանների նշանակությունը: Այստեղ ևս խոսակցության մեջ գործընթացը սովորաբար վայրկենական է:

Այսպես՝ ծածկագրումն ինքնին հաղորդագրերը խոսքային և ոչ խոսքային խորդրդանիշների ձևակերպման գործընթացն է, իսկ վերձանումը՝ դրանց մեկնաբանման գործընթացը: Մեծ մասամբ մեր օգտագործած բառերն ու խորհրդանիշները կախված են հանդիսականի (ունկնդիր) կարիքների և կարողությունների մեր ընկալումից:

Երբ մարդիկ փորձում են մյուսների հետ հաղորդակցվել, նրանք իրենց հաղորդագրություններին տրվող պատասխանի կարիքն ունեն: Այդ պատասխանները, հաղորդագրությունը, խոսքային կամ ոչ խոսքային արձագանքները կոչվում են հետադարձ կապ: Հետադարձ կապը ուղարկողին ասում է, թե արդյոք հաղորդագրությունը տե՞ղ է հասել կամ հասկացվել:

Անշուշտ, հետադարձ կապը կարող է նաև ոչ խոսքային լինել: Մարդիկ կարող են պարզապես գլխով անել կամ թոթվել ուսերը՝ հարցին ի պատասխան: Հաղորդակցության արդյունավետությունը մեծապես կախված է հետադարձ կապից:

Արդյունավետ հաղորդակցության համար պետք է կարողանալ հետադարձ կապը մեկնաբանել: Խոսակցության ժամանակ ակնկալում ենք, որ մարդիկ կխոսեն մեզ հետ: Այլ կերպ ասած, մենք նրանցից ակնկալում ենք պատասխանել մեր հաղորդագրություններին՝ ասելու, թե ինչ են մտածում: Հրապարակային ելույթների ժամանակ հանդիսականի արձագանքը ընդհանուր առմամբ ոչ խոսքային է, ինչպես հորանջը կամ ժպիտը: Ե՛վ պաշտոնական, և՛ ոչ պաշտոնական իրավիճակներում ինչքան մարդ շատ բան իմանա հանդիսականի մասին, այնքան ի վիճակի կլինի ճանաչել և մեկնաբանել բառային և ոչ բառային հետադարձ կապի դեպքերը:

Մի շարք քայլեր հաղորդակցային գործընթացի մեջ

Հաղորդակցային գործընթացը բաղկացած է մի շարք փոխկապակցված քայլերից: Այդ քայլերի առաջընթացը զանազանվում է՝ ըստ որոշակի մարդկանց, իրադրությունների կամ այլ հանգամանքների: Հնարավոր է, որ քայլերը կրկնվեն, ունենան տարբեր դասավորվածություն կամ էլ կապակցվեն մի շարք ձևերով, թեև որոշ չափով այդ քայլերից յուրաքանչյուրը սկսում է գործել, երբ մեկը խոսում է մյուսի հետ կամ մասնակցում խմբային քննարկման, հանդես գալիս լայն լսարանի առջև: Դիտարկենք դրանք:

Գաղափարներ գտնելը: Արդյունավետ հաղորդակցության համար, նախ մարդ կարիք ունի ինչ-որ բան հայտնելու: Լավ գաղափարներ, մտքեր գտնելը հաջողության գրավականներից է: Այս քայլը հատկապես կարևոր է պաշտոնական խոսքային իրավիճակների համար, ինչպես խմբային քննարկումները և հրապարակային ելույթները. ի հավելումն դրա՝ ընկերների խոսակցությունը խրախուսելի է, եթե միայն քննարկման նյութը ուշագրավ է: Մտքերը կարգավորելիս մարդ պետք է մտովի հաշվի առնի հանդիսատեսին (ունկնդրին), այն իրավիճակը, որում պետք է հաղորդակցվի, հաստատված ժամանակահատվածը և մի շարք այլ գործոններ: Մտքերը բաղկացած են թեմաներից և դրանց զարգացումներից: Հռետորը կարող է մտքեր ներկայացնել իր սեփական կենսափորձից, ինչպես նաև իրազեկ աղբյուրներից: Նա իր խոսքը սովորաբար սկսում է մի ընդհանուր մտքից կամ նյութից, այնուհետև անցնում որոշակի նյութի, որն ինքնին հարմարեցվում է հանդիսականին:

Հանդիսականին հարմարակում: Արդյունավետ հաղորդակցության համար անհրաժեշտ է հարմարվել հանդիսականի պահանջներին: Հանդիսականին հարմարեցվելու համար պետք է որոշակի պատկերացում ունենալ պահանջի կառուցվածքի վերաբերյալ: Իրադրությունից կախ-

ված՝ հանդիսատեսը կարող է լինել մի անձ կամ հազարավոր անձեր: Կարելի է տեղեկություն գտնել հանդիսականի վերաբերյալ՝ մշակութային, հանրաբանական կամ անհատական մակարդակով: Այդ իմացությունը մեզ կօգնի որոշել, թե հաղորդագրությունները ինչպես պետք է ուղարկվեն, և հանդիսականը ինչպես կարձագանքի դրանց: Երբ հանդիսականը քննվում է մշակութային մակարդակում, նման հարցերին կարելի է նայել ժամանակաշրջանի, ցեղի և ազգային հողի վրա: Ինչ խոսք, տեղեկատվության այս մակարդակը միայն լայնամասշտաբ իմացություն է ենթադրում: Ինչպես Ռ. Վերդերբերն է նշում. «Հոետորը ևս կարիք ունի հարմարեցնելու ձեր յուրաքանչյուր հաղորդագիրը նաև անհատական ունկնդրին» [8]:

Երբ քննում ենք հանդիսականին հանրաբանական մակարդակում, հոետորը այս ամենին նայում է այն տեսանկյունից, թե դրանք հանդիսականի ո՞ր խմբին են պատկանում և ինչպիսի ուղղվածություն ունեն: Հոետորի պարզած նյութի հիման վրա կարելի է ձևավորել ունկնդիրների վերաբերյալ որոշ ընդհանուր պատկերացում:

Հանդիսականին քննելով անհատական մակարդակի վրա՝ հոետորը դիտարկում է այդ ամենը անձի բնավորության գծերի, հետաքրքրությունների և ոլորտների տեսանկյունից: Այս կետերը օգնում են կանխատեսելու, թե անհատը որոշակի տեղեկատվության ինչպես կպատասխանի: Այս մակարդակը հատկապես կարևոր է ամենօրյա խոսակցության մեջ:

Ամփոփելով այս ամենը՝ հարկ է նշել, որ հաղորդակցությունը պահանջում է առնվազն երեք տարր, այն է՝ տեղեկատվության աղբյուր, հաղորդագրություն և նպատակատեղ: Եվ այսպես՝ ամեն մի հաղորդագրություն աղբյուր ունի և փոխադրված տեղեկատվության համար՝ նպատակատեղ, և սա պետք է հստակ լինի ժամանակի ու տարածության մեջ: Տեղեկատվության աղբյուրի և նպատակատեղի միջև պետք է որոշ կապ լինի, որը ընդգրկում է դրանց միջև ընկած ժամանակը կամ տարածությունը, և այդ կապը կոչվում է հաղորդակցության աղբյուր: Աղբյուրը կարող է լինել անհատական (խոսելը, գրելը, նկարելը, ժեստերով արտահայտվելը և այլն) կամ հաղորդակցային կառուցվածքով (ինչպես՝ լրագիրը, տպարանը, հեռուստակայանը կամ շարժանկարի տաղավարը): Հաղորդագրությունը կարող է լինել գրավոր, բանավոր կամ օդի մեջ՝ անհողաբաշխ ձայնային ալիքներով: Նպատակատեղը կարող է լինել անհատական ունկնդրությամբ, դիտումով կամ ընթերցմամբ հաղորդագրությունն ընդունող այս կամ այն խմբի անդամ, ինչպես նաև քննարկող խումբ, դասախոսության ունկնդիր, լրագիր ընթերցող կամ հեռուստա-

դիտող: Որպեսզի տեղեկատվությունը կարողանա անցնել տեղեկատու աղբյուրով, պետք է այնպես ներգործել դրա վրա, որ այն հարմար լինի փոխանցման համար, իսկ բաղադրիչը, որ կատարում է այս գործողությունը, հաղորդիչ է դառնում: Նպատակատեղում պետք է լինի հաղորդագիր ստացողը, որն էլ փոխում է հաղորդված տեղեկատվությունը և այն բերում նախկին տեսքի: Այսպիսով՝ նշված հինգ բաղադրամասերը՝ աղբյուրը, հաղորդիչը, տեղեկատվական աղբյուրը, ստացողը և նպատակատեղը ներկայացնում են իդեալական հաղորդակցային համակարգը: Այս հինգ բաղադրիչները առկա են հաղորդակցային ամեն մի ձևում: Հետևաբար, երբ տեղեկատվության աղբյուրը փորձում է հաղորդակցություն հաստատել այն ընդունողի հետ, նա նախ՝ ծածկագրում է իր հաղորդագրությունը, այսինքն՝ իր տեղեկատվությունը դարձնում է փոխանցման համար հարմար, այնուհետև՝ ուղարկում այն: Մեր «գլխի մեջ եղած պատկերը» չի կարող փոխանցվել որևէ մեկի, մինչև այն չծածկագրվի: Երբ դրանք ծածկագրված են խոսակցության բառերով, արդեն դյուրությամբ ու արդյունավետ կարող են հաղորդվել: Երբ դրանք ծածկագրված են գրավոր ձևով, առավել դանդաղ են ընթանում, քան բանավորի դեպքում, սակայն առավել հեռուն են հասնում և երկար տևում: Հենց ծածկագրվեց ու ուղարկվեց, հաղորդագրությունը միանգամայն անկախ է դառնում ուղարկողից, և վերջինս այլևս անգոր է այն փոխելու:

Այսպիսով՝ բնականոն հաղորդակցության համար հաղորդագրություն ուղարկողն ու ստացողը պետք է գտնվեն տեղեկատվություն փոխանցելու և հետադարձ կապ ապահովելու շահեկան հարաբերությունների մեջ:

Համագործակցային սկզբունքներ (մաքսիմներ)

Ամեն անգամ, երբ ներգրավվում ենք մեկից մտքեր ստանալու գործընթացին, դա ինքնին դառնում է հաղորդակցային գործընթաց, և պետք է այն շատ հմտորեն ու խնամքով վարել հաջողություն ակնկալելիս: Հարկ է նշել, որ հաղորդակցությունը իրապես չի գործի, եթե մասնակիցները չդիտարկեն համագործակցության չորս հիմնական պահանջները, այն է՝ տեղին լինելը (հարմարությունը), ճշմարտացիությունը, քանակը և հստակությունը [3]:

Այս պահանջները, որոնք սկզբունքներ են կոչվում, առաջադրել է հայտնի տեսաբան Փ. Գրայսը որպես համագործակցային չափանիշներ: Այսպիսով՝ համագործակցային առաջին սկզբունքը պետք է «տեղին» լինի, այսինքն՝ յուրաքանչյուրը պետք է ուսումնասիրական նյութին իր տեղին ներդրումը կատարի: Հաղորդակցային ուղերձները չեն կարող

անկանոն (պատահական) լինել, այլ սերտորեն պիտի առնչվեն արդեն կատարվածին: Գրայսի երկրորդ սկզբունքն այն է, որ այդ ներդրումները պետք է «ճշմարտացի» լինեն: Սա, իհարկե, չի նշանակում, որ մարդ չպետք է սուտ խոսի, այլ այն, որ հաղորդակցային ընթացքի կողմնակիցը պարզապես ասում է մի բան, ինչ ինքը ճիշտ է համարում: Քանակի սկզբունքն այնքան էլ հասկանալի չէ մարդկանց: Խոսակցության ընթացքում բոլորը պետք է իրար հանդեպ «արդարամիտ» լինեն: Եվ վերջում Գրայսը նշում է, որ հարկ է «պարզ» լինել և խույս տալ անորոշությունից, որպեսզի մեր ուղարկած հաղորդագրերը կանոնավոր կառուցվածք ունենան: Ինքնին հասկանալի է, որ հաղորդագրությունը ավարտուն կլինի, եթե վերոհիշյալ բոլոր չափանիշները առկա լինեն հաղորդակցային գործընթացում [2]: Այստեղ ավելորդ չենք համարում հավելել հաղորդակցային մեկ այլ չափանիշ ևս, այն է՝ համոզության (համոզմունքի) սկզբունքը, որը, իրավամբ, ամբողջական տեսք կտա հաղորդակցությանը [1]:

Փորձենք շարունակել դիտարկել պարզ հաղորդագրությունների ծածկագրման և ըմբռնման գործընթացը և հետադարձ կապը, ինչպես նաև հաղորդագրության նկատմամբ խոսքային և ոչ խոսքային անդրադարձները: Արդեն նշել ենք, որ հաղորդագրի վերադարձման գործընթացը կոչվում է հետադարձ կապ, որը խիստ կարևոր նշանակություն ունի հաղորդակցության մեջ, քանի որ այն մեզ հուշում է, թե ինչպես են մեր հաղորդագրերը մեկնաբանվում: Այսպես խմբագրին հասցեագրված նամակը, որ բողոք է արտահայտում խմբագրակազմի նկատմամբ, կամ էլ դասախոսության ժամանակ բռն ծափերը ինքնին հետադարձ կապի ձևեր են: Փորձառու հաղորդակցվողը շատ ուշադիր է հետադարձ կապի նկատմամբ և մշտապես դիտարկում է իր հաղորդագրերը բովանդակային և հրատապության տեսանկյունից: Ակնհայտ է, որ հետադարձ կապը կարող է արտահայտվել տարբեր կերպ՝ և՛ խոսքային, և՛ ոչ խոսքային, սակայն մեզ առավելապես հետաքրքրում են հաղորդագրության նկատմամբ խոսքային անդրադարձները: Եվ այսպես՝ խոսողի կարողությունը ճանաչելը և հետադարձ կապը մեկնաբանելը խիստ կարևոր են հաղորդակցության արդյունավետության հարցը դիտարկելիս: Փաստորեն, եթե ունկնդիրը չի ճանաչում և մեկնաբանում հետադարձ կապը, հաղորդակցությունը մնում է անկատար: Այսպիսով՝ այն հարցը, թե խոսողն ենք արդյոք, (ծածկագրում) պայմանավորում է ոչ միայն այն՝ մեզ լսում են թե ոչ (վերձանում), այլ նաև այն՝ մեզ լա՞վ են հասկանում, թե՞ ոչ (հետադարձ կապ): Անշուշտ, շատ գործոններ՝ և՛ լեզվական, և՛ արտալեզվական, կարող են ներգործել ըմբռնման գործընթացի վրա և, կարող են պայ-

մանավորել ուղարկված հաղորդագրերի հետադարձ կապի առկայությունը կամ բացակայությունը: Հաղորդագրողը, այսպիսով, (աղբյուրը) մտքեր կամ հույզեր (հաղորդագրություն) է ուղարկում մեկ այլ մարդու (նպատակատեղ) փոխանցողի և ընդունողի միջոցով:

Ուստի աղբյուրը նախ ծածկագրում է իր հաղորդագրությունը, երբ ցանկանում է հաղորդակցություն առաջացնել նպատակային ստացողի հետ: Այլ կերպ ասած՝ նա իր տեղեկատվությունը կամ հույզերը հնարավոր փոխադրաձևի մեջ է գետեղում, այսինքն՝ խոսողի տեղեկատվությունը կամ հույզերը արդեն ծածկագրված են: Այլևս ծածկագրված և ուղարկված հաղորդագրությունը միանգամայն անկախ է դառնում ուղարկողից: Մեր ուսումնասիրության մեջ խիստ կարևոր ենք համարում նշել այն հանգամանքը, որ հաղորդագրությունը պետք է վերծանվի, և ուղարկողը պետք է հետադարձ կապ ստանա նպատակատեղից, որպեսզի հաղորդակցությունը ավարտուն լինի, և ուղարկողը համոզվի, որ հաղորդագրությունը արդեն ստացվել է, հասկացվել և ճշտիվ մեկնաբանվել:

Թե արդյոք հաղորդագրությունը կստացվի և հետադարձ կապը կապահովվի, կախված է շատ գործոններից՝ թե՛ լեզվական և թե՛ արտալեզվական, ինչպես դյուրըմբռնելի լեզվի գործածումը աղբյուրի և նպատակատեղի համար, ծածկագրման զանազան ձևերը, տարբեր քերականական և բառային իմաստները, հնչերանգի ոճը և այլն՝ մի կողմից, և մշակութային հենքը, որոշակի իրավիճակը, մասնագիտությունը, կրթությունը, դաստիարակությունը, գաղափարախոսությունը, տրամադրությունը, տարիքը, սեռը, ֆիզիկական և հոգեկան վիճակը, մտավոր և խոսքային կարողությունները, բարոյա-վարքականոնային վիճակը, խոսակցի մասին պատկերացումը և այլն՝ մյուս կողմից, որպես լեզվական և արտալեզվական գործոններ: Այստեղ պիտի խոսվի նաև անավարտ հաղորդակցային ակտերի մասին՝ կախված ոչ թե լեզվական գործոններից, այլ որպես արտալեզվական գործոնների ազդեցության արդյունքի, գլխավորապես՝ հոգեբանական: Հիշատակված այս բոլոր արտալեզվական գործոնները կարող են ներգործել խոսքի հասկացության վրա և հանգեցնել ունկնդրի հետադարձ կապի բացակայությանը, որն էլ արդյունք է հաղորդակցային ակտի անկատարության: Կարող է թվալ, թե հաղորդակցային ակտը ավարտված է, քանի որ առաջին հայացքից դրա բոլոր բաղադրիչները գործողության մեջ հնարավոր է՝ առկա լինեն, սակայն միևնույն ժամանակ հաղորդակցային ակտը կարող է անավարտ լինել հետադարձ կապի բացակայության պատճառով:

Ինչպես Վ. Սատիրն է նշել իր «Հաղորդակցություն. հաղորդագրություն ստացողի խնդրանք կատարելու խոսքային և ոչ խոսքային գործընթացը» հոդվածում, այն հարցին, թե ինչ է ուղարկողը ի նկատի ունեցել իր հաղորդակցությամբ, խոսակցին կարելի է պատասխանել՝ ունենալով առնվազն երկու մակարդակ.

ա/ իմաստ արտահայտող մակարդակը, այն է՝ ճշգրիտ ծավալը,

բ/ մակահաղորդակցային մակարդակը, այն է՝ ճշգրիտ ծավալի, նաև հաղորդակցության մասնակիցների միջև եղած հարաբերության բնույթի վերաբերյալ մեկնաբանությունը [5]:

Այլ կերպ ասած՝ մետահաղորդակցությունը հաղորդագրություն է հաղորդագրության մասին, քանզի այն հաղորդում է ուղարկողի վերաբերմունքը իր ուղարկածի վերաբերյալ, իսկ իր հույզերը, մտադրությունները՝ ուղարկողի նկատմամբ: Համանման են հետևյալ մտքերը, «մարդ չի կարող չհաղորդակցվել» և «մարդիկ չեն կարող չմակահաղորդակցվել» [5]: Հետևաբար այս բոլոր գործոնները շատ հարմար են խոսքի ըմբռնման գործընթացի համար:

Երկխոսությունը հաղորդակցային ակտի մեջ

Հարկ է նշել, որ եթե լեզուն մարդկային հաղորդակցության հիմնական միջոցն է, ուրեմն երկխոսությունը լեզվի իրականացման էական ձևերից մեկն է: Երկխոսությունը խոսակցություն է, որի ընթացքում տեղի է ունենում կարծիքների ու մտքերի փոխանակում: Խոսակցությունը բխում է մարդու մտքերի, հույզերի, կարծիքի, մտադրությունների, ցանկությունների, կամքի արտահայտման անհրաժեշտությունից: Դրանք տեղեկացնում կամ հայտնում են որևէ բանի մասին և արտահայտում մեկի կարծիքը խոսակցի արտահայտած մտքի վերաբերյալ: Մարդը միշտ շփման մեջ է շրջապատող աշխարհի հետ, նա ինքնարտահայտման և ինքնահաստատման կարիք ունի: Միննույն ժամանակ նա մյուսների վրա ազդեցություն ունի և փորձում է հասնել իր նպատակին, բավարարել սեփական կարիքները: Այսպես՝ մարդկային գործունեության ամենակարևոր պայմաններից է հաղորդակցություն-շփումը:

Մարդը մշտապես շրջապատից եկող նշաններ է վերծանում, մեկնաբանում դրանք և ծածկագրում է դրան որոշ մասը: Փաստորեն սխալ է կարծել, թե հաղորդակցությունը սկիզբ է առնում մի ինչ-որ տեղ և ավարտվում միանգամայն այլ տեղ: Հաղորդակիցներից մեկի պատասխանը մյուսի համար խթան է: Հաղորդակցությունը անվերջ գործընթաց է, իսկ մարդիկ մշտապես ընդգրկված են այդ անվերջ շարժմանը:

Մովորական հաղորդակցությունը, ինչ խոսք, միայն մի «խթան/

պատասխան» զույգով սահմանափակված չէ. այն շարունակաբար առաջ է ընթանում՝ նոր փուլեր ներառելով: Դիտողությունն ու պատասխանը սերտորեն կապված են միմյանց հետ, միահյուսված են և հերթագայում իրար: Դրանք աստիճանաբար բարդանում են: Այն դիտողություն/պատասխանը մեկ ուրիշի հետ միասին, որից ինքը կախված է և առանց որի՝ այն չի կարող հասկացվել, կազմում է երկխոսության հիմնական կորիզը, այսպես կոչված «հաղորդակցային միավորը»: Ինքնին հասկանալի է, որ կարելի է խոսել հաղորդակցային միավորի մասին միայն այն դեպքում, երբ այն կազմող բոլոր բաղադրիչներն առկա են, մասնավորապես՝ հետադարձ կապը:

Հաղորդակցությունը միակողմանի չէ, այն ավելի շուտ տեղեկատվության փոխանակում է: Այստեղ հարկ է նշել, որ խոսակիցները փոխանակում են դերերը՝ որպես խոսող և ունկնդիր՝ ամբողջ հաղորդակցության ընթացքում: Խոսակիցների ա՛խուժությունը կարող է հավասարաչափ լինել կամ լավ տարբերակված՝ կախված նրանց խառնվածքից, շփվողականության և լեզվական մակարդակից, խոսքային ընդունակություններից, խոսակցության նկատմամբ հետաքրքրությունից, հաղորդակցության թեման որոշելու կամ դրան որոշակի տոն տալու հանրային կամ իրադրական առավելությունից: Դերերի փոխանակումը տարբեր աստիճաններում է լինում՝ կախված նաև այն բանից, թե արդյոք հաղորդագրությունը փոխանցվում է, կամ էլ հետադարձ կապը՝ վերադարձվում: Այս իմաստով հաղորդագրությունը կարող է ներկայացվել որպես հաղորդակցային ակտերի շղթա, եթե ուղարկողը և ընդունողը հաղորդակցության մեջ փոխանակում են իրենց դերերը [5]:

Այսպիսով՝ հաղորդակցային գործընթացում յուրաքանչյուր մասնակից միաժամանակ և՛ ծածկագրող է, և՛ վերձանող: Նա ստանում ու փոխանցում է հաղորդագրություններ և կարող է մի դեպքում՝ ստացող, մյուս դեպքում՝ ուղարկող լինել:

Խոսակիցների միջև ծավալված երկխոսության հորինվածքը մասնատվում է և միննույն ժամանակ միավորվում խոսակցության թեմայով: Որոշակի տեղեկատվություն է ստեղծվում մասնակից երկու անձանց ջանքերով: Անավարտ հաղորդակցային ակտերի դեպքում երկխոսության բովանդակային շերտը չի կարելի նույնացնել հաղորդակցության նյութի հետ, քանի որ հետադարձ կապի բացակայությունը հաղորդակցությունը անավարտ է դարձնում:

Ժամանակի գործոնը նույնպես կարևոր է հաղորդակցային ակտի և հաղորդակցության գործընթացի համար ընդհանրապես. հաղորդակ-

ցային ակտի շատ առանձնահատկություններ կախված են հաղորդակցության տևողությունից: Տեսական ժամանակը թույլ է տալիս մտքերը, հույզերը ավելի լավ ու խելամիտ կերպով կառուցել: Շտապողականությունը և ժամանակի սղությունը խոսքին անփութություն, միջամտություն, կիսատ-պռատ կառուցվածքներ է հաղորդում: Անհատական տարբերությունների խնդրի դիտարկումը ևս էական է հաղորդակցության գործընթացը ընկալելու համար: Հարկ է նշել նաև այն միջոցը, որն առավել հաճախ օգտագործվում է մասնավորից ընդհանուր դարձած խոսակցության համար, այն է՝ խոսքային վարքագիծը: Մարդու ունեցած ոչ մի այլ գործողություն ինքն իր մեջ այնքան խորանալու կարողություն չունի, որքան խոսքային վարքագիծը: Միանգամայն տրամաբանական է խոսել հաղորդակցության ժամանակ անձնական առանձնահատկությունների բացահայտման մասին, քանի որ հիմնականում մարդու մտավոր և նմանատիպ բարձր հոգեբանական գործողությունները, ինչպես՝ ըմբռնումը, հիշողությունը, մտածողությունը և այլն ներկայացվում են բառերի օգնությամբ որպես հոգեբանական միջոցների: Այստեղ խոսողների անհատական տարբերությունները ևս պետք է հաշվի առնվեն հաղորդակցության ուսումնասիրման համար, քանի որ բացի իրազեկություն հաղորդելուց՝ մարդիկ մտադիր են հաղորդել նաև ինչ-որ այլ բան. խոսքը օգնում է ունկնդրին կռահելու խոսողի ազգությունը, սեռը, տարիքը, հանրային կացությունը և կրթությունը: Անկախ այն ամենից, թե արդյոք մարդկանց դուր է գալիս, ունկնդիրները խոսողի կարծրատիպն են կազմում՝ ըստ խոսողի խոսքային սովորությանց ստացած տպավորության: Մարդկանց արտաբերած յուրաքանչյուր բառը ինքնին հույզերի, տրամադրությունների և խոսողին խոսելու պահին զբաղեցնող մտքերի բացահայտումն է: Հենց միայն այն, որ տարբեր մարդիկ խոսում են տարբեր լեզուներով, թերևս անհատական տարբերությունների ամենավառ վկայությունն է: Մարդկանց գործածած լեզուն փաստորեն իրենց հանրային ժառանգության անբաժան մասն է, ոչ թե պայմանավորված է մասնավոր անձի առանձնահատկություններով: Այսպիսով՝ խոսքը՝ ամբողջովին վերցված, խոսողն է, խոսողի բնավորության և փորձի, հույզերի և մտադրությունների բացահայտումը: Խոսքը մեծապես որոշում-տարբերակում է անձնավորությանը, ուստի մարդկային խառնվածքի անկապտելի մասն է կազմում:

Այս ամենից դատելով՝ լայն հնարավորություն կա խոսքը հաղորդագրողի համար պարզելու, թե արդյոք հաղորդագրություն ստացողը «համաձայն է» (ներդաշնակ է իրեն) իր հետ, թե՛ արդյոք ստացողի

«գլխում եղած պատկերը» համահունչ է ուղարկողի մտքում եղածին: Անհրաժեշտ է նշել, որ լեզվական հաղորդակցությունը հաջողված է խոսողի տեսանկյունից, եթե ունկնդիրը իմանում է խոսողի մտադրությունը հաղորդակցվելու ընթացքում, և եթե հաղորդակցային ակտը ունկնդրի վրա թողնում է ցանկալի արդյունք: Այս առումով, հայտնի է բոլորիս, որ հաղորդակցության ընթացքում ակտի որևէ մասնակից՝ ուղարկողը, փորձում է փոխել մյուս մասնակցի՝ հաղորդագիր ստացողի վարքագիծը կամ վիճակը՝ հաղորդագրեր ուղարկելով: Վարքագիծ փոխելը նրանով է արտահայտվում, որ հաղորդակցության մասնակիցը որոշ գործողություն է կատարում կամ հաղորդագրությանը պատասխան տալիս, այսինքն՝ ապահովվում է հետադարձ կապը: Վարքագծի փոփոխությունը ենթադրում է անհատի հարաբերության փոփոխությունը որևէ առարկայի կամ երևույթի նկատմամբ, որն էլ իր հերթին հանգեցնում է վարքագծի հնարավոր փոփոխության: Այսպիսով՝ հաղորդակցությունը խոսք է պահանջում որոշակի ազդեցություն թողնելու համար, որի դեպքում լեզվական հաղորդակցությունը արդյունավետ է դառնում: Ունկնդրի տեսանկյունից սովորաբար բավական է իմանալ խոսողի մտադրությունը, այլ հարց է, թե ունկնդրին ինչպես կհամոզեն կամ ինչ կհասկացնեն: Ուրեմն, ինչպես Վ. Շրամն է նշում. «Եթե աղբյուրը չունի համապատասխան կամ հստակ տեղեկություն, երբ հաղորդագրությունը ամբողջությամբ, խնամքով, փոխանցող նշաններով արդյունավետ ծածկագրված չէ, եթե դրանք արագ փոխանցված չեն ցանկալի ստացողին, եթե հաղորդագրությունը ծածկագրման կաղապարին համապատասխան վերծանված չէ, և, վերջապես, եթե նպատակատեղը ի գուրու չէ մեկնաբանելու վերծանված հաղորդագրությունը՝ կամայական պատասխան տալու համար, ապա այդ դեպքում նշված համակարգը գործում է խիստ պակաս արդյունավետությամբ» [3]:

Արդ՝ միանգամայն պարզ է դառնում, որ տեղեկատվությունը մեկնաբանելու գործընթացը կախված է շղթայում եղած յուրաքանչյուր օղակի առանձին հնարավորությունից:

Եզրակացություն

Հարկ է ուրվագծել այս ուսումնասիրման մի շարք եզրափակիչ կետեր. դրանք են.

1. Հաղորդակցության գլխավոր կորիզը այսպես կոչված «հաղորդակցային միավորն» է: Կարելի է խոսել հաղորդակցային միավորի մասին միայն այն դեպքում, եթե հաղորդակցային ակտի բոլոր տարրերը առկա են, մասնավորապես՝ հետադարձ կապը, հաղորդակցությանը ուղղված խոսքային և ոչ խոսքային արձագանքները:
2. Հաղորդակցության համակարգը բաղկացած է հինգ բաղադրիչներից՝ աղբյուր, հաղորդիչ-փոխանցող, տեղեկատվության աղբյուր, ընդունող և նպատակատեղ:
3. Հետադարձ կապի բացակայությունը սովորաբար հանգեցնում է հաղորդակցության ձախողման և հաղորդակցային ակտի անավարտության:
4. Լեզվական և արտալեզվական գործոնները կարող են առաջացնել հաղորդակցային ակտի անավարտություն:
5. «Ներքին կամ հոգեբանական աղմուկ» եզրույթը կարող է օգտագործվել հոգեբանական գործոնից կամ անձի հոգեկան վիճակից առաջացած հաղորդակցային ակտի մեջ՝ միջամտության համար:
6. Հաղորդակցությունը միակողմանի ընթացք չէ, այլ տեղեկատվության փոխանակում: Ուստի խոսակիցները հաջորդաբար փոխում են խոսողի և ունկնդրի դերերը հաղորդակցության ընթացքում, և այդ դերերի փոխանակումը կատարվում է տարբեր ժամակամիջոցում՝ կախված զանազան գործոններից:
7. Հաղորդակցությունը անհրաժեշտություն է: Միմյանց հետ հաղորդակցվելիս հաջողության հասնելու համար անհրաժեշտ է հմուտ և գիտակ լինելը:

Այսպիսով, մեր գլխավոր նպատակն էր ներկայացնել հաղորդակցության երևույթը, գործընթացը, բացահայտել հաղորդակցային ակտերի ավարտունության խնդիրը՝ պայմանավորված նաև արտալեզվական գործոնի ազդեցությամբ:

Գրականություն

1. Ջադիյան Ն. Ա., Գիտական հոդվածներ // «Մխիթար Գոշ», «ՄԻՄ տպագրատուն», Վանաձոր, 2016:
2. Grice Paul, Studies in the Way of Words, Harvard University Press, 1991.
3. Marcussen Hatch Evelyn, Discourse and Language Education, Cambridge, New York, 1992.
4. Messages: A Reader in Human Communication Edited by Jean M. Civikly, Vilbur Schramm, How Communication Works, New York, 1974.
5. Messages: A Reader in Human Communication Edited by Jean M. Civikly, Virginia Satir, Communication: A Verbal and Nonverbal Process of Making Requests of the Receiver, New York, 1974.
6. Miller George A., Language and Communication, New York, Toronto, London, 1963.
7. Psycholinguistics: A Survey of Theory and Research Problems. Edited by Charles E. Osgood and Thomas A. Sebeok with A Survey of Psycholinguistics Research, 1954-1964, by A. Richard Diebold and the Psycholinguistics by G. Miller. Bloomington and London, 1969.
8. Verderber Rudolph F., Speech for Effective Communication // HBJ Hartco Brace Jovanovich, Publishers, 1988.

К вопросу о речевом акте

Нина Джагинян

Резюме

Ключевые слова: коммуникация, сообщение, язык и мышление, вербальные и невербальные символы, диалог, коммуникативные максимы, кодификация и декодификация, обратная связь.

В статье рассмотрены некоторые вопросы, касающиеся речевых актов в межличностной коммуникации. В лингвистике речевой акт производится со стороны индивида, который не только сообщает информацию, но и выполняет действие. Теория речевых актов приобрела важную роль не только в философии, но и в лингвистике, психологии и литературоведении. Это – речь, которая имеет значительную функцию в коммуникации. Речевые акты взаимодействуют с реальной жизнью и требуют не только языковых знаний, но и соответствующего применения этой информации в данной культуре.

В статье представлены разные концепции и подходы к речевым актам, которые были выдвинуты такими известными теоретиками, как Р. Вердербер, Е. Осгуд, Дж. Миллер, Ф. Грайс, В. Шрамм. Известно, что все люди коммуницируют с помощью кодификации и декодификации. Мы подробно рассмотрели речевые акты, уделив особое внимание кодификации и декодификации сообщений. Кодификация соотносится с процессом номинации каких-либо идей или мысленных образов, после сопоставления которых со словом, данные лексемы используются для передачи сообщения.

Мы также изучили декодификацию как обратный процесс аудирования слов, рефлексию и их превращение в мысленные образы. Большое внимание было уделено и вопросу обратной связи, которая является последним шагом в коммуникации. Она делает коммуникацию разумным и продолжительным процессом.

Thoughts on Speech Act

Nina Jaghinyan

Summary

Key words: *communication, message, language and thought, verbal and nonverbal symbols, dialogue, conversational maxims, encoding and decoding, feedback*

The paper touches upon some observations on speech act within the framework of human communication.

In linguistics, speech act is something expressed by an individual that not only presents information but performs an action as well. “Speech act theory” has become influential not only within philosophy but also in linguistics, psychology, literary theory. It is an utterance that serves a function in communication. Speech acts include real life interactions and require not only knowledge of the language but also appropriate use of that knowledge within a given culture.

The article presents different viewpoints and approaches to speech act suggested by famous scholars, such as R. Verderber, E. Osgood, G. Miller, P. Grice, V. Schramm. It’s known that all humans communicate through a process of encoding and decoding. We’ve observed the speech act thoroughly focusing on encoding and decoding of the message. Encoding refers to the process of taking an idea or mental image, associating that image with words, and then speaking those words in order to convey a message.

We’ve also studied decoding as the reverse process of listening to words, thinking of them, and turning those words into mental images. Here we’ve paid much attention to feedback, which is the final step in the communication process. It makes the communication meaningful and a continuous process.

Ներկայացվել է 29.09.2021 թ.

Գրախոսվել է 04.10.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.